Շրջակա միջավայրը և երեխաների առողջությունը

Մրցանակ լավագույն գործնական նախագծերի համար

Հարցում հաջողված նախագծերի օրինակների մասին

2009 թ. սեպտեմբեր

2004 թվականին Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի 52 երկրների առողջապահության և շրջակա միջավայրի նախարարները ստորագրեցին «Շրջակա միջավայրը և երեխաների առողջությունը» եվրոպական գործողությունների ծրագիրը /ՇՄԵԱԵԳՇ/ (CEHAPE): Այժմ, 5 տարի անց, 8 լավագույն փորձնական նախագծերը կներկայացվեն Իտալիայում կայանալիք «Պաշտպանենք երեխաների առողջությունը փոփոխվող շրջակա միջավայրում» հաջորդ նախարարական համաժողովում:

Մրցանակները. Նախատեսված է 1000 - ական եվրո արժողության 8 մրցանակի շնորհում: Մրցույթի հաղթողներին մրցանակները կշնորհվեն նախարարների կողմից շրջակա միջավայրի և առողջության վերաբերյալ նախարարական համաժողովի ընթացքում, որը կկայանա 2010 թվականի մարտի 10-12-ը, Իտալիայի Պարմա քաղաքում: Կազմակերպիչները կհոգան հաղթողների ճանապարհային և հյուրանոցային ծախսերը:

Հովանավորները. Այս մրցանակները և մրցանակների հանձնման արարողությունը հովանավորում են Ավստրիայի, Դանիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի և Շվեդիայի կառավարությունները՝ Եվրամիության Հանձնախմբի աջակցությամբ:

Փորձագետների միջազգային ժյուրի. Մրցույթին ներկայացված նախագծերը գնահատելու է փորձագետների անկախ միջազգային ժյուրին, որի կազմում ընդգրկվելու է մրցույթի յուրաքանչյուր թեմատիկ ուղղվածության 2 փորձագետ: Ժյուրիի կազմում լինելու են ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանի 53 երկրների
առողջապահության, սանիտարիայի և շրջակա միջավայրի ոլորտների փորձագետներ, երիտասարդության, միջագային կազմակերպությունների, ինչպես նաև շրջակա միջավայրի և առողջության հարցերով զբաղվող կազմակերպությունների ցանցի ներկայացուցիչներ:

Մրցույթին մասնակցելու իրավունքի մասին. Հայտ կարող են ներկայացնել Եվրոպայի, Արևելյան Եվրոպայի, Հարավ-Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի 53 երկրների այն կազմակերպությունները կամ խմբերը, որոնք աշխատում են երեխաների առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության բարելավման ուղղությամբ, օրինակ, դպրոցները, երիտասարդական խմբերը, տեղական իշխանությունները, ոչ կառավարական կազմակերպությունները:Նախագիծը պետք է կամ արդեն ավարտված լինի կամ գտնվի իրականացման փուլում:

Մրցույթի թեմատիկ ուղղվածությունները. «Հաջողված նախագծի» օրինակները պետք է ուղղված լինեն ստորև նշված 8 թեմատիկ ուղղվածություններից որևէ մեկին:

Թեմատիկ ուղղվածություն	Նկարագիրը
1. Ջուր և/կամ սանիտարիա (ՇՄԵԱԵԳՇ – ի տարածաշրջանային առաջնահերթ թիվ 1 նպատակը)	Աղե-ստամոքսային հիվանդությունների և ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների կրճատում: Երեխաների համար խմելու ջրի որակի, հիգիենայի և սանիտարական

	պայմանների բարելավում
2. Դժբախտ պատահարներ և /կամ ֆիզիկական ակտիվություն (ՇՄԵԱԵԳՇ – ի տարածաշրջանային առաջնահերթ թիվ 2 նպատակը)	Առողջության համար դժբախտ պատահարներով, վնասվածքներով և գիրությամբ պայմանավորված վնասի նվազեցում: Երեխաների համար ֆիզիկական միջավայրը դարձնել ավելի անվտանգ ու առողջ
3. Շինության ներսում և/կամ շինությունից դուրս օդի աղտոտում (ՇՄԵԱԵԳՇ –ի տարածաշրջանային առաջնահերթ թիվ 3 նպատակը)	Շնչառական հիվանդությունների կանխարգելում և նվազեցում: Երեխաների համար սենյակային և մթնոլորտային օդի որակի բարելավում
4. Քիմիական նյութեր և/կամ ճառագայթում (ՇՄԵԱԵԳՇ –ի տարածաշրջանային առաջնահերթ թիվ 4 նպատակը)	Թունավորման, անդառնալի վնասի և քրոնիկ հիվանդությունների կրճատում: Կանխարգելել և կրճատել երեխաների առողջությանն ու կյանքին սպառնացող քիմիական և ֆիզիկական վտանգները
5.Երտասարդության մասնակցություն	Սերունդների համագործակցություն: Երիտասարդ սերնդին ներգրավել «Շրջակա միջավայրը և առողջությունը Եվրոպայում» գործընթացին
6.Շարժունակություն	Շրջակա միջավայրի աղտոտվածության, դժբախտ պատահարների և քաղաքների ընդարձակման կրճատում: Երեխաների տեղաշարժը դարձնել ավելի անվտանգ և առողջ
7. Կլիմայի պաշտպանություն	CO_2 -ի արտանետումների կրճատումը և հարմարվելը կլիմայի փոփոխությանը: Երեխաների և երիտասարդների շրջանում իրազեկության բարձրացում, ածխածնի արտանետումները նվազագույնի հասցնելու գործելակերպի բարելավում և կապը առողջության հետ:
8. Դպրոցներ	Դպրոցներում և մսուր-մանկապարտեզներում նվազեցնել էկոլոգիական վտանգների ազդեցությունը երեխաների առողջության վրա: Ընդլայնել դպրոցներում երեխաների առողջության և շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված գործելակերպը

Ընտրության չափանիշները. Նախագծերը գնահատվելու են զրոյից (պահանջները չբավարարելու դեպքում) մինչև 5 միավոր (գերազանց)՝ ելնելով հետևյալ հանգամանքներից.

- **Էականությունը/կարևորությունը.** Որքանով է նախագիծն առնչվում Եվրոպայում երեխաների առողջության և շրջակա միջավայրի հիմնախնդրի հետ
- **Ակնհայտ արդյունքները**. Ինչպես է նախագիծը ներկայացնում շոշափելի արդյունքները երեխաների առողջության և շրջակա միջավայրի համար **Տեղեկացվածության և իրազեկության բարձրացում**. Ինչպիսին է նախագծի ներդրումը շրջակա միջավայրի և երեխաների առողջության հիմնախնդրի վերաբերյալ տեղեկացվածության և իրազեկության բարձրացման գործում:

- **Փոխգործակցություն/բազմասեկտորային մոտեցում**. Որքանով է հաջողված այլ խմբերի, կազմակերպությունների և սեկտորների ներգրավվածությունը նախագծի աշխատանքներին
- **Փոխադրելիություն/կրկնօրինակում**. Հնարավոր է արդյոք նախագիծը կրկնօրինակել կամ ընդլայնել այլ վայրերում ու երկրներում
- **Յուրօրինակություն**. Նախագծի նորույթը կամ նորարարությունը
- Նախագծի **արդյունավետությունը ծախսերի տեսակետից**

Լրացուցիչ տեղեկատվության և «Շրջակա միջավայրը և երեխաների առողջությունը» եվրոպական գործողությունների ծրագրի շրջանակներում նախորդ մրցութային նախագծերի օրինակների համար այցելեք, խնդրեմ, «Առողջ շրջակա միջավայր երեխաների համար» կայքը՝ http://cehape.env-health.org

Կարևոր տեղեկատվություն

2009 թ. դեկտեմբերի 7, երկուշաբթի - «Շրջակա միջավայրը և երեխաների առողջությունը» եվրոպական գործողությունների ծրագրի մրցույթի մասնակցության հայտի ներկայացման վերջնաժամկետը

2010 թ. հունվարի 22, ուրբաթ - Հայտարարություն 8 հաղթողների մասին

2010 թ. հունվարի 30 – Ուղևորության ֆինանսավորման և վիզաների ձևակերպման մասին կազմակերպիչներին դիմելու վերջնաժամկետը

2010 թ. փետրվարի 5, ուրբաթ - Հաղթողների կողմից լրացուցիչ տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետը (անհրաժեշտության դեպքում)

2010 թ. մարտի 10-12, հինգշաբթի-ուրբաթ – Նախարարական համաժողով և մրցանակների շնորհման արարողություն Պարմայում

Մրցույթի կազմակերպիչները. Պարմայում կայանալիք շրջակա միջավայրի և առողջության նախարարների 5-րդ համաժողովի համար մրցույթը և հաջողված փորձնական նախագծերի համար մրցանակները նախապատրաստվելու են «Եվրոպայի կանայք՝ հանուն ընդհանուր ապագայի» /WECF/, «Հանուն առողջության և շրջակա միջավայրի ալյանս» /HEAL/, «Բժիշկների միջազգային ընկերություն՝ հանուն շրջակա միջավայրի» (Ավստրիա) /ISDE/ և Եվրոպայի «էկո-Ֆորում» կազմակերպությունների համատեղ ջանքերով:

Հովանավորները. Այս մրցանակները և մրցանակների հանձնման արարողությունը հովանավորում են Ավստրիայի, Դանիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի և Շվեդիայի կառավարությունները՝ Եվրամիության Հանձնախմբի աջակցությամբ:

Organizers:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել՝ Olivia Radu, Women in Europe for a Common Future (WECF): olivia.radu@wecf.eu; Tel: +31-30-2310300, Biltstraat 445, NL – 3572 AW Utrecht, Postal Address: PO Box 13047, 3507 LA Utrecht, the Netherlands

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել՝ Olivia Radu, Women in Europe for a Common Future (WECF): olivia.radu@wecf.eu; Tel: +31-30-2310300, Biltstraat 445, NL – 3572 AW Utrecht, Postal Address: PO Box 13047, 3507 LA Utrecht, the Netherlands